

եւ իրեններուն հացը(4) : Կինը գիտէր կամ սորվեցաւ դերձակութիւն, եւ ան ալ կ'աշխատէր՝ միասին բառնալու ընտանեկան բեռը(5) :

25. — Անցեալ եւ ներկայ դառն փորձերը այլափոխած էին Լուսինեանի մէջ ամէն ինչ. երազները ցրուած, երիտասարդական տենչանքներն ամոքուած, հասարակչութեան, գտած իսկական ու դիտակից մարդու հանգամանքն ու ծանրութիւնը : Եւ նա կը վայելէ այժմ իր ծանօթներու անկեղծ վստահութիւնն ու մեծարանքը : Վոքս, լուրջ ու խղճամիտ անձ մը, անոր համառօտ կեանքը դժեց, յարելով անոր քանի մը կարեւոր վաւերագիրներ ալ : Ատոնց մէջ կայ 1877-ին, իր մահէն վերջ, Միլանի պրետորին առջեւ ու չորս պատկառելի վկաներու ստորագրութեամբ վաւերացուած վկայագիր մը եւս, որ այսպէս կը նկարագրէ զինքը. «Լեւոն իշխան Լուսինեան կատարեալ ազնուական մըն էր. իր կրթութեամբ, ողջ մտութեամբ ու նկարագրով արժանի այն բարձր տոհմին՝ որմէ կը ծագէր, բոլորովին զերծ անապարծութենէ : Ձինք կը չընկալուէին ընտիր անձեր, թէ՛ քաղաքացի ու կրօնական, եւ թէ՛ դիւանագիտական կարգերէ, որոնք իրեն հետ վարուեցան՝ անոր ծննդեան եւ արքայական արիւնին վայել ակնածութեամբ»(6) : Գիտցաւ ուրեմն այս հայորդին՝ իր կեանքի երկրորդ շրջանին՝ իրեն ազնուատոհմ մարդ մը, բարոյապէս բարձր բունել իր ազգին անունը Լոմպարտիոյ ոստանին մէջ :

Մտնենք վայրկեան մը նկատելու զինք նաեւ ընտանեկան յարկէն ներս, ամուսնական ու հայրական կրկնակ պարտականութիւններուն մէջ : Վերոյիշեալ վկայագիրը այսպէս կը խօսի անոր կնոջ մասին. «Իր անձնանուէր ընկերը՝ Անթոնիա Լուսինեանը կը մատուցանէր ամենափափուկ սիրոյ խնամքը. եւ իր հիւսիսային հոգիով կը օգնէր անոր ծննդեան ու մեծարանքը : Այդ է ամուսնական կեանքի ճշմարիտ կանոնն ու ձեւը, որ երկուստեք փոխանակութեամբ տեղի կ'ունենայ :

Իսկ անոր հայրական գործունէութեան նկատմամբ՝ Փր. Պոճճի, հետեւեալ տողերուն մէջ կը կրկնէ անոր որդիէն՝ Գուլիտոնէ լսածը. «Ես տասնչորս տարեկանիս կը խօսէի Փրանսերէն, անգլիերէն ու դերմաներէն : Հայրս սորվեցուց ինծի այդ լեզուները : Ամէն երեկոյ մեզ կը նստեցնէր սեղանին շուրջ, զիս, Հովհարտ (Ռուբէն) եղբայրիկս եւ Լեւոնտինա քոյրս՝ որ երիցագոյններն էինք, եւ ազատ էր թողուր մինչեւ որ քունէն չիշնայինք : Յետոյ ցերեկը, երբ տունն էր՝ վերստին կը սկսէր : ... Հայրս ցերեկը չէր խօսեր բնաւ. միայն երբեմն հարցում մը կ'ուղղէր ինծի Փրանսերէն կամ անգլիերէն, տեսնելու համար թէ սորված էի : ... Այսպէս եօթնէն մինչեւ տասնըհինգ տարեկանիս՝ ուսայ լեզուները : ... Ձեմ կարող չար խօսիլ իր մասին. ուսում տուաւ ինծի. տըւաւ նաեւ իմ եղբայրներուս ալ»(7) : Իր աշակերտներն ու տան զարդերը՝ հին հին գեղեցիկ ու բարդ անուններ ունէին. Գուլիտոն — Եղուարդ, Լեւոն — Հենրիկ — Ռուբէն, Պետրոս, Մարիամ — Լէոնիտա, Փիննա եւ Մարիամ — Հեղինէ(8) :

Որդին կը պատմէ նաեւ Լեւոնի ներքին կեանքը. «Հայրս հազիւ ժամ մը կը քնանար չիշերը : Անսովոր մարդ էր : Երբ բոլորս անկողին կ'ըլլայինք, ինք ժամերով կը ճեմէր սենեակին մէջ : Երբեմն այդ ճեմով մինչեւ առաւօտ կը հասնէր» : Անցած

երազներն էին, որ կը կապուէին քունը, ծանրանալով իր մտքին առջեւ, թէ ընտանիքի պահպանութեան հոգը՝ որ կը ճընչէր : «Ջղային էր, կը շարունակէ, եւ յաճախ տխրութիւնը կը պատէր զինք : Գիտէ՞ք ինչ բանէ վը հասկնայինք ատիկա : Երբ կը խօսէր ու կ'ըսէր մ'օրս՝ որ այլեւս աշխատելու տան մէջ ձեռք կը զարնէր ամէն բանի՝ օգնելու համար իր կնոջ. նոյնիսկ պնակները լուալու : Թո՛ղ թէ թաղաւոր խորասանի» : Եւ անոր շահելու կարողութեան չափը կը ցուցնէ հետեւեալ օրինակին մէջ. «Երբ ներկեր ունենար եւ նկար մը շինէր, զայն ուրիշներու կողմէ տար առանց դրամի : Պատանեկութենէն ի վեր շատ քիչ վարժած էր»(9) :

26. — Լեւոնի անխոհեմութիւններուն պատճառով՝ զոր յիշեցինք (հ. 15), Ս. Ղազար 1863-էն վերջ բոլորովին խղած էր իր յարաբերութիւնները անոր հետ (հ. 23) : Միայն Հ. Ալիշանն էր որ երբեմն կը թղթակցէր, կամ աւելի ճիշտ՝ կը պատասխանէր Լեւոնի գրածներուն : Այս վիճակը կը զգացնէ ինքն իսկ 1875-ի Ապրիլ 12-ին առ նոյն Հայրը ուղղած նամակին մէջ, ըսելով՝ թէ Հիւրմիւլեան Աբրահայրը շարաթ մը առաջ իր գրածին չէ պատասխանած : «Կը կասկածիմ, կ'ըսէ, որ նամակս կորսուած ըլլայ, կամ թէ Նորին Գերապատուութիւնը այլ եւս աշխարհի վրայ չէ. վասնզի արդէն կորսնցուցի զանազան անկեղծ բարեկամներ, ինչպէս Պր. Լանկուա», գաղղիացի հայագէտը : Յիշեալ նամակը չկայ տարւոյն տուփին մէջ : Լեւոն անով խնդրած էր Աբրահայրէն՝ Հոմերոսի թարգմանութիւնը, զոր Հ. Բազարտունին «խոստացած էր ինծի», կ'ըսէ առ Հ. Ալիշան. «Եւ չեմ գիտեր՝ թէ կ'ապրի՞ տակաւին. որովհետեւ այն ժամանակ արդէն յառաջացած էր տարիքով»

(սա արդէն վախճանած էր 1869-ին. իսկ Հիւրմիւլեան Աբրահայր կ'ապրէր տակաւին) : Կ'ուզէր ունենալ Իլիականը, որովհետեւ թարգմանիչը «մէկն է մեր հայ լաւագոյն հեղինակներէն. եւ նոյնպէս Վիրգիլիոսի գործերը, վասնզի լաւ թարգմանուած են հայերէնի» : Այսպէս Լուսինեան կը հետաքրքրուէր ու վը գուարճանար տակաւին գրականութեամբ :

Կը շարունակէ՝ թէ իր բարեկամը, Կոմս Թումինի, քանի մը ամիս առաջ այցելելով Վենետիկ, իր մասին տեղեկութիւն հարցուցած էր, եւ Միլիթարեան մը պատասխանէր թէ «ես այլեւս չկամ. (թերեւս լուր չունէին իր մասին). մինչ ես Փարիզ կը գտնուէի ամենակարեւոր գործի մը պատճառով» : Ոչ անշուշտ քաղաքական, որոնց ժամանակն այլեւս անցած էր :

Սակայն ուսական նպաստին հարցը սեւեռած վը մնար դեռ իր ուղեղին մէջ, եւ միշտ կը յուսար անոր նպաստաւոր մէկ լուծումին : Յիշեալ նամակին մէջ վերըստին կը խօսի անոր մասին, մեղի համար նոր տեղեկութիւն մը տալով. «Այն շրջանին՝ երբ Ռուսիոյ կայսրուհին Սան Ռեմոյ կը գտնուէր, կ'ըսէ, հաշտեցուց Ռուսիոյ հետ՝ Ն. Վահագնապետի միջոցաւ, եւ ինծի խոստացաւ վերադարձնել իմ բոլոր ինչքերս : Իսկապէս Մարտ 15-ին (որ տարւումն) Հոմի ուսական գեասպանէն ընդունեցայ գեկոյց մը՝ թէ ինչքերս պիտի դարձուն ինծի. այսպէսով պիտի կարենամ օգտակար ըլլալ Ազգին» : Այս դէպքը ամէն տեսակէտով տարբեր է մայր կայսրուհին պարագայէն՝ զոր տեսանք (հ. 20). եւ յետոյ հանդիպած ու արծարծած է Լեւոնի յոյսը : Ռուսական անամօթութիւնն էր որ այդպէս երբեմն կը խաբէր զայն, հանդարտ պահելու համար : Հուսկ կը յանձնարարէ ողջունել Քափելիթի քահանան, վաստակաւորը հայ գրականութեան, զոր կը ճանչնար : Տեղեկութիւն կը խնդրէ Հիւրմիւլեաններու

(4) ԱՊՊ՝ 61. (5) Հաւ. (6) ՃՃՊ՝ 69.

(7) Հաւ. (8) ՃՃՊ՝ 64-65.

(9) Հաւ.



մասին: Կը խոստանայ Ս. Ղազարու նուէր ղրկել Ս. Չեչիլիայի նկարը: Եւ «մտադիր եմ, կ'ըսէ, ընտանիքով դալ Վենետիկ, յատկապէս տեսնելու համար մեր վանքին դեղեցկութիւնը»: Բայց իր ճակատագիրը դէպի ուրիշ կողմ կ'առաջնորդէր զինքը:

27. — Կէս մը շահելու եւ պահելու անկարողութենէն, կէս մըն ալ չար բախտէն՝ Լեւոնի տնտեսական վիճակը երթալով կը դժուարանար, որքան հետզհետէ կը բազմանար ընտանիքը: Անցած փոթորիկները միացած ներկայ տաղանայներուն հետ՝ կրծեցին իր կեանքը, որ սահմանուած էր ընդհատուելու կէս ճամբուն վրայ, անկատար թողլով իր հայրական պարտականութիւնն անգամ՝ իր զաւակներուն հանդէպ:

Մեռնելէն երկու տարի առաջ (1874-ին) պատրաստեց իր կտակը «կատարեալ առողջութեան մէջ»: Անոր մէջ կը ներէ «ի խորոց հոգեւոյն» այն բոլոր վարկաբեկութիւններուն եւ անիրաւութիւններուն, որոնց Ռուսիոյ կայսրը ենթարկեց զինք, յուսալով տակաւին՝ որ 1846-ին իրմէ կողպտուած ինչքերուն մէկ մասն իրեն դարձնէր, որպէսզի կարենար իրականացնել իր վերջին կամքը: «Ես կը մեռնիմ, կ'ըսէ, Կաթողիկէ Առաքելական կրօնքին մէջ հայոց, որոնց առաքեալն է Ս. Գրիգոր Լուսաւորիչ»: Կը յաւելու որ «յետ մահուան՝ մարմինս թաղուի ամենապարզ կերպով Ս. Դիոնիսիոսի նկուղներուն մէջ, ուր կը հանգչին իմ նախնիքներէս Լեւոն Զ. արքայ Հայոց»: Յետոյ իր վեց զաւակներուն «Լուսինեան իշխաններուն եւ իշխանուհիներուն» կը թողու յիսուեալան հաղար Փրանք եւ իր բոլոր ազամանդները(10):

Յիսուեալան հաղար, աղամանդներ՝ ... — որոնք իբր թէ պիտի դառնային իրեն — մինչդեռ վերջին ժամանակները

պատառ մը հաց անգամ չունէր իր զաւակներուն տալու, եւ «հարկադրուեցաւ դիմել հասարակաց օգնութեան», կը գրէ Միլանի քաղաքապետարանը 1876-ին (հ. 17). բարոյական մեծադուշն հարուածն էր այս՝ զոր կրնար տալ իրեն սեւ բախտը: Ատոր վրայ «ինկաւ խոր թախծութեան եւ նոյն իսկ ապշութեան վիճակի մը մէջ», կ'ըսէ պրետորական յայտարարութիւնը(11): Կանթեղին յետին ճարձատուաներն էին՝ որ կը տեսնուէին այդ տառապող հոգիին վրայ: Իսկ ուս լրտեսները դեռ չուրջն էին: Եւ «այդ հոգեբանական վայրկեանին մէջ, կ'ըսէ որդին, 1846-ի աւաղակները առաջարկեցին իրեն հարիւր հաղար Փրանք(12), պայմանաւ «մոռնալու իր հայրենիքը, իր բարեկամները, իր իրաւունքները, իր դժբախտութիւնները, իր զաւաժարականն ու իր ուխտերը: Միակ բառ մը, ոչ, եղաւ իր պատասխանը այդ ծայրագոյն թշնամանքին». եւ իր դողդոջ ձեռքը կորովի արձանագրեց այդ բառը առաջարկութեան անպատիւ թուղթին վրայ(13), իր թշուառութեան դաշտին մէջ կանգնելով հայ հոգիին աննուաճ դողողութիւնը:

1876-ի Փետրուարի ցուրտ երեկոյ մը, «պատանիներու խումբ մը անցնելով Գեւուա դռներու ամբուլթեանց քովէն», դրտան մարդ մը «ցուրտէն ընդարձացած եւ կոնակին վրայ գետին ինկած»: Գթած ձեռքեր զայն հիւանդանոց փոխադրեցին. եւ հոն գրպաններէն ելաւ կնքուած ծրար մը, եւ ծրարէն՝ դէպ մը թուղթերու, վաւերագրերու, նամակներու՝ պաշտօնական վերնագրերով ու պաշտօնական ստորագրութիւններով(14), որոնք կը վկայէին թէ այդ անձը Լեւոն Լուսինեանն էր, որ վկայականները իր սրտին մօտ կը պահէր անբաժան: Նոյն ամսուն 21-ին առաւօտեան կը զօղանջէր հիւանդանոցի եկեղեցւոյն զանգակը, դաշն ու սղաւոր: Եւ Լե-

ւոն Զ. ի ձեռք, խորասանի արքայաչուք իշխանը, Հայաստանի հռչակեալ թագաւորն ու Կիլիկիոյ գահապահանը, առանց իր բազմամբոխ ժողովուրդին, առանց իր զօրքերուն եւ ողբերգական փողերուն, կարեկից անշուշտ խմբակ մը լոկ իր ետեւէն եւ քահանայի մը առաջնորդութեամբ ու մրմունջներով, կ'երթար կը մտնէր, հեռի՛, հեռի՛ Ս. Դիոնի, «հասարակաց փոսի մը մէջ», հանգչելու համար սոսկական մահկանացուներու հետ, կուշտ կուշտի, եւ խառնելու իր աճիւնն անոնց հետ:

Իսկ իր արքայադրոջ թանկագին ծրարը, այդ շտեմարանը իր փառքին, անուրջներուն եւ յուսախաբութեանց, նոյնպէս կ'երթար թաղուելու պատմութեան դիւանին մէջ, ուր կ'աւարտին ամէն շուք ու մեծութիւն:

28. — Գտա՞ւ Լեւոն իր հանգիստը հողին մէջ: Ո՛չ. ամբուլթիւնն սկսաւ հարածել անոր յիշատակն ալ. եւ լրագիրները զինք ըրին հրեայ դնու մը, որ կեղծ նամակներով կը խաբէր հասարակութիւնը. լեհ հրեայ մը, գերման հրեայ մը, կամ ճաւացի հրեայ մը. նոյն տեղէն ու ցեղէն իր կիներն ալ՝ որ Լուսինի Պոնաբարդէն դրամ չորթած էր. եւ դեռ ուրիշ հաղար ու մէկ սոստեր՝ հասարակաց կարծիքը դարձնելու համար ընդդէմ անոր որբերուն(15), որոնք կրնային օր մը պահանջող կանգնիլ Ռուսիոյ դէմ: Բայց չարերը չյաջողեցան. ողջամիտ անձերու պաշտօնական յայտարարութիւններ նշաւակեցին զանոնք, եւ իրեն ի պաշտպանութիւն՝ լոյս տեսան մեզի ծանօթ երկու տեսարանները (հ. 1), մէկը նոր, եւ միւսը կրկին տպագրութեամբ:

Հանգուցեալին կտակը բացուեցաւ եւ տեսնուեցաւ որ կտակաւատար նշանա-

կած էր զօրավար մը, հիւպատոս մը, եւ երկու հայ արքայախոյսներ, որոնց անունները զեղչուած են հրատարակիչէն: Այդ եկեղեցականները՝ անկասկած Հիւրմիւղեան եղբայրներն են, որոնք իր մեռած տարին եւ իրմէ վերջ վախճանեցան. իսկ հիւպատոսը՝ կը համարիմ որ Փրանսային ըլլայ, այն երկրին՝ զոր իրեն բաւեկամ կը կարծէր, « իր նախնիքներուն որորանը »(16), եւ ուր թաղուիլ ալ կը փափաքէր: Հիւպատոսը տեսնելով որ հարցը շատ կնճռոտ էր եւ հաստատուն հիմեր ալ չունէր՝ նամակով մը հրաժարականը տուաւ Լեւոնի կնոջ(17):

Այդ կտակը՝ անուանական չքեղ ու ճոխ կարգադրութիւններու տակ՝ «խոր կարօտութեան մէջ վը թողուր» իր ընտանիքը(18): Միլանի լրագիրներու կարեկցարար կատարած հանգանակութիւն մը(19) չէր կարող ամօքել անոնց թշուառութիւնը: Եւ Լուսինեանի ամուսինը, չափազանց զգածուած այդ վիճակէն, նոյն տարուան Օգոստոսին իսկ «ցաւէն» դնաց միացաւ տարաբախտ կենակցին. ամիս մը վերջ՝ իրենց վերջին դատրիկն ալ, Մարիամ-Հեղինէ, հետեւեցաւ իրենց. մնացած մատաղ մանուկներուն բարեգութ պաշտպան կանգնեցաւ Քրաուտիոյ Պորի քահանան, իրեն գործակից առնելով ուրիշ երկու աղեցիկ աշխարհականներ: Միլանի մէջ դրտան դաղդիացի երեք ընտանիքներ — որոնց աղջկէն էին հին Լուսինեանները — որոնք յանձն առին որբերուն հոգաբարձութիւնը, բաժնելով զանոնք իրենց մէջ եւ յանձնելով կրթական հաստատութեանց(20): Մահուան անգութ մանգաղը անոնց ալ չխնայեց, անձխտելով չորսը եւ թողլով միայն անդրանիկը՝ Գուլիտոն, որ աննշան եւ անշուք կեանք մը անցուց՝ 25 տարի իբր վարիչ հսկելով երկաթուղիի անկողնաւոր կառքերու: Ինքն ալ անժառանգ,

(15) Ճշմ. 31, 33, 76. (16) Անդ. 8.

(17) Անդ. 31.

(18) Անդ. 67. (19) Հան.

(20) Ճշմ. 33, 68, 69, 78.

(10) Ճշմ. 64. (11) Անդ. 69. 12 Անդ. 78.

(13) Վ. Բոս, անդ. 28. (14) Հան.

եւ վերջին օրերուն մնացած չքաւոր, 1932-ին աչքերը փակեց, հիւանդանոցին կաթոսեալներու բաժնին մէջ, 69 տարեկան (21), իր տան միակ ու յետին ներկայացուցիչ ձգելով խտալուհի կենակիցը՝ Անճելա, զոր տեսանք աշխատութեան սկիզբը (հ. 1), նոյնպէս կարօտ ողորմութեան: Բախտը ասկէ աւելի անպթօրէն չէր կրնար խորտակել աղնուաղարմ ընտանիք մը:

ՎԵՐԱՄԱՆ

29. — Հայոց պատմութեան մէջ առանձին դրուագ մը պիտի կազմէ Լեւոնի կեանքը, մեծ ու բարդ ողբերգութիւն մը, ոչ զուրկ հետաքրքրութենէ, կապուած ըլլալով միանգամայն հայ ազատութեան կարեւոր խնդրին հետ: Իսկապէս աղնուաղարմ պատանի մը, կանուխէն որք մնացած եւ կորսնցուցած հայրենի փոքր իշխանութիւնը, մեծագոյնին կը ձկտի՝ ոչ կատարեալ գիտակցութեամբ իր գործերուն եւ արդիւնքներուն. այդ պատճառով՝ կը կորսնցնէ յափշտակողէն ստացած անուանական պատիւը, հայրենիքն ու շարժուն հարստութիւնն ալ եւ կը մատնուի պանդխտութեան ու չքաւորութեան: Բայց աւելի կը փայլի նա զրկումի այդ ծանր վիճակին մէջ: Չարդացած, մտացի, հօր կամք, անսահման ձեռնբեկութիւն, եւ յետոյ մեծամեծար Լուսինեան անուան, կը շրջի բովանդակ Եւրոպա՝ իր հպարտակներուն ետեւէն, իր հետքերուն վրայէն տանելով ամէնուրեք քաղաքական թշնամիներն ալ, որոնք մինչեւ մահը պիտի չզատուէին իրմէ, եւ հոն ալ պիտի հալածէին զինք: Բանտեր կը տեսնէ, կ'աքսորուի արտասահման, կը մենամարտի, կը պատերազմի, կը վիրաւորուի, դաւաւրու կ'ենթարկուի, ամէն փորձանքներէ կ'անցնի: Բայց փոխանակ վհատելու՝ կը

(21) Անդ՝ 73. Հաճ:

բազմապատկէ ճիւղերը. ամէն դուռ կը բախէ, ամէն քար կը շարժէ, յաճախ դժգոհութիւններ ալ պատճառելով: Վեհապետներ միջնորդ կ'առնէ Ռուսերու կայսեր դիմելու՝ իր իրաւունքները փրկելու համար: Կը ճօճէ հայկական անկախութեան հարցը, կը բանակցի կայսրերու եւ իշխանութիւններու հետ, պետութեանց սեղաններու վրայ կը գնէ զայն: Եւ կը հասնի վայրկեան մը՝ երբ կը մերձենայ իր այդ երազին. եւ մինչ կը բանայ գիրկը, աւա՛ղ... խոյս կու տայ նա յաւերժաբար: Տարապայման էր անշուշտ իր ձեռնարկը՝ այնքան մեծամեծներ անհանդիստ ընելու իր ոռճիկին համար: Յանդուգն էր նաեւ հայ կարգինալի մը պահանջը, որ սակայն ի վերջոյ կ'իրականանայ, թէպէտ իր չուղած անձին վրայ:

Նկատենք՝ որ հասարակ «բախտախնդիր» մը գործը չէր այդ բոլորը. այլ հանճար ու կարողութիւն կը պահանջէր եւ մեծ ազգասիրութիւն: Այո՛, եւ ազգասիրութիւն. թող ատոր քով ըլլայ իր անձն ալ, ինչ որ մարդկային է, եւ իր պարագային մէջ նաեւ կարեւոր՝ լսելի ընելու համար իր ձայնը օտար տէրութիւններու:

Իր յատկութիւններուն հետ, Լեւոն ունէր նաեւ երկու թերութիւն. նախ՝ ապաւինած իր պիտակ մականունին, ազգայիններու եւ օտարներու առջեւ իր անձին վերադրեց ունեցածէն մեծագոյն հեղինակութիւն եւ դեր մը բովանդակ հայութեան մէջ, ստեղծական իրաւունքներ, փափաքելին իբրեւ իրական տեսնելով ու ցուցնելով, ինչ որ թերեւս դիւանագիտութեան պահանջն էր, եւ կարեւոր՝ յաջողութեան համար. բայց անախորժ կը դարձնէր ինքզինքը անոնց՝ որ իրմէ պակաս տեղեակ էին պատմութեան եւ իր ծագման. եւ մեր ազգային նկարագիրը այդ պարագային գիւրաւ ներող չէ: Երկրորդ՝ չափազանց եւ անօգուտ ազմուկներ հանեց, ստարապայման վստահութեամբ մը նայելով եւրոպական պետութիւններու

խաբեպատիր քաղաքականութեան, որոնց դործն եղած է միշտ — եւ եղաւ իր օրով ալ — ձեռք կարկառել հայկական հարցին՝ լոկ իրենց շահերուն համար, եւ ապա մատնել զայն. եւ որուն ապացոյցը ինքն իսկ տեսաւ՝ մեծ յուսախաբութեամբ եւ ուստի անհուն դառնութեամբ: Երկու թերութիւններն ալ արդիւնք էին անոր երկտեսարդական դեղուն խանդին եւ անփորձութեան:

Եթէ իսկական Լուսինեան մը չէր Լեւոն — ինչ որ անհրաժեշտ չէր մեծ գործեր կատարելու համար — բայց իր մէջ կը բռնակէր դադափարապաշտ աղնուաղարմ մը: Եւ այդչափ հաստատութիւն ու գործունէութիւն, շարունակուած մանաւանդ յետ երկար փորձառութեան մը, ո'րչափ չքեղ արդասիւքներ կրնային տալ, եթէ նա փոխանակ Պորասանի՝ եւրոպական աստղի մը ներքեւ բացած ըլլար աչքերը: Բոլոր կայսրները կայսր չծնան: Եւ իր ջանքերը անկասկած պտղաբեր պիտի ըլլային՝ իր պայմանին մէջ իսկ՝ մեր ազգին համար, եթէ յետ Գաղղիան շահելու, ինչ որ մեծ յաջողութիւն մըն էր իրեն, չբախէին Ալբիոնի աւանդական հակառակութեան հայ ազատութեան դէմ, որ խափանեց պետութիւններու միաբանութիւնը անոր շուրջ: Պէտք է ընդունինք որ մեծ էր իր նպատակը, մեծ՝ անոր հասնելու ճիւղերը, եւ ոչ դոյշն՝ ձեռք բերուած արդիւնքը: Եւ եթէ

բախտը հակառակ չոգորէր ու չընդհատէր իր գործը կէս ճանապարհին վրայ, իսկապէս շողշողուն էջ մը պիտի գրաւէր նա մեր պատմութեան մէջ:

Լքուած բախտէն ու մարդերէն, ծրարած իր անուրջները, կ'ամփոփուի ընտանեկան անձուկ եւ անշուք յարկի մը մէջ, սիրուած իրեններէն ու նուիրուած անոնց: Եւ իր այդ խոնարհութեան մէջ՝ դեռ աւելի կը բարձրանայ իր դպօնամիտ ծանօթներու աչքին, քան երբ կը ջանար մաքուր անհասանելի բարձունքներն ի վեր: Այդտեղ ալ կը տառապի ան, կը տառապի մինչեւ մահ, բայց անչէջ պահելով միշտ իր աստիճանը եւ իր ու ցեղին իրաւունքներու գիտակցութիւնը, եւ կնքելով իր ողբերգութիւնն աշխարհիս ամէնէն չարաբատիկ մարդուն վախճանով, որպէսզի ամէն ինչ, կարծես, տարօրինակ ըլլար իր կեանքին մէջ:

Չուղեցի որ այդպիսի Հայու մը յիշատակը, ցարդ աննշմար թողուած մեր արդի պատմիչներէն, եւ յանկարծակի կանգնած իմ առջեւ, դառնար թաղուէր վերստին հին փոշիներու ներքեւ, կամ կարենար նոյնիսկ կորսուիլ անհետանալ մասամբ կամ ամբողջովին, եւ զրկէր մեր պատմութիւնն իրմէ: Արձանագրեցի եւ կը յանձնեմ Ազգիս:

1938

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ

